ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27.04.2018թ.
ժամը 12 [00]

Մասնակիցներում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ գնդապետ Հ. Կարապետյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պետի տեղակալ, գնդապետ Ս. Բաղասյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 Սույն ընթացակարգի մասով 2018թ. մարտի 28-ին Հակոբ Ռազմիկի Առաքելյանը ներկայացրել է ԳԲԽ-ԷՍ-2018/48 ծածկագրով բողոք, պահանջելով.

Չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Թիրախային ամբարձիչների» ձեռքբերման գնանշման հարցման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 23.03.2018թ. ժամը 10:00 կայացած նիստի N 4 Արձանագրությամբ կայացված որոշումները «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 9-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 9-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին:

Գնումների բողոքարկման խորհրդը 18.04.2018թ. կայացրել է որոշում, որը, սակայն հրապարակվել է 25.04.2018թ.՝ համաձայն որի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի բողոքը բավարարվել է (կցվում է): Քանի որ Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումն իրավապարտադիր է, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, 1-ին և 9-րդ չափաբաժինների մասով և 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին:

1.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ գրաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Ս. Բաղասյան
Գնահատող	Տ. Գասպարյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան